

Այլ եւ անձինք բաղումք բարեպաշտութեամբ զարդարեալք եւ ի յազգաշահ իրողութիւնս ուրախութեամբ սրտի նպաստիւ արդեան ձեռնամուկք (որոց զանունսն գրեմք) ըստորեւ կարեքցեալ օգնեցին ի փառս միոյն աստուծոյ եւ ի պարծանս լուսաւորչակրօն Տայկազեան տոհմին: Բարձր բարեճնունդք նախ աղնուածին, բնութեամբ բարի, քաղցր, իմաստուն, հեղ, հանգիստ, ողորմած բարեսէր Ն: ազելի երիտասարդ Յարեթեան տոհմ Շ: նորհօք լի:

Նա եւս ամենայն պատուոյ արժանիք Ազայ Մարութ Յովսէփի փունչեանց եւ պարոն Յարութիւն Կարապետն եւ պարոն Մանուկ Յակոբջան որ ոսկրիձ մանուկեանց ասի: եւն նշանագրեալք ի գրքոյս անզուգ բարերարութեամբ մխիթարիչքն մեր: վերջապէս շնորհակալութիւն հասարակ բնակչաց մադրասիս հայոց ի մեծաց մինչեւ ցփոքունս աէր վարձատրեսցէ աստ եւ ի հանդերձելումն ամէն եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք անմահ գառին աստուծոյ:

այս է երրորդ տպագրութիւնն:

«Այս է երրորդ գրքիւնն» ըսելով, կրնանք հասկնալ թէ սոյն գիրքն Մադրասայ մէջ երեք անգամ տպագրուած է, թէ ոչ՝ լիովոնցի եւ Կ. Պոլսոյ տպագրութիւնն սեռած եւ ասոր ալ երրորդ տպագրութիւն ըսած է:

Տ. Վ. Պ.



Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԳՐՈՆՄԻՆՈՒԹՅՈՅ ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի հիմնադրութիւնն ու յարմարութիւնք:

Այսօրուան ու սկզբնական Հայաքաղքին գիրքին ու մանաւանդ յատակագծին վրայ մեծ փոփոխութիւն մ'եղած չէ: Ան կայ միայն՝ որ հիմակ ընդարձակուած է ու ատեն ատեն կանգնուած նոր շէնքերովը գեղեցիկ կերպարանք մ'առած է:

Քաղքին կենդրոնը կը կացուցանէ գլխաւոր հրապարակն Ա, որ գրեթէ քառակուսի մը կը կազմէ. վասն զի մինչդեռ երկայնութիւնը 125 եւ լայնութիւնը՝ 122 մէր է, ըսել է թէ իր ամբողջ բնած միջոցը կամ մեծութիւնը 15.250 քառակուսի մէր է: — Այս քաղաքատակ մեծ շրջանին մէջ կը կատարուին երկու շաքաթական՝ ու չորս տարեկան մեծ տօնավաճառները:

Այս հրապարակին շուրջ մէջ տեղը կեցած էր Ա մինչեւ 1893 միայակ մեծ խորհրդանոցն իր զորաւոր կամարներովն, որ Հայոց հոն գաղթեցին քիչ մը ետքը կանգնուեցաւ իրբեւ վաճառանոց կամ արեւելեան շուկայ: Ա շէնքին վրայ քաղաքային վարչութիւնն աւելցուց նախորդ դարուն սկիզբները՝ դատիկոն մըն ալ, ուր կը կատարէր իր գաղտնի խորհուրդներն ու ժողովքները: Շէնքին վարի մասը մնաց միշտ մասնաւոր գերդաստանաց կամ առանձնական մարդիկներուն ձեռքն, որոնք զայն կը գործածէին իրբեւ խանութ ու կրպակ: Հասարակութիւնը հետզհետէ այս խանութները մասնաւորներէն իրեն յատկացուց: Եւ որովհետեւ վարի — համեմատութեամբ տկար — շէնքը չէր կրնար վրան յեցած յաղթանդամ՝ յարկը տանիլ, անոր համար 1889ին, քաղաքային որոշման մը համեմատ, աս խորհրդանոցը գոյուեցաւ: Խորհուրդներն սկսան, իրեն գիմացն եղող ի ակմբանոցին մէջ (casino) կատարուիլ: Իսկ վաղեմի խորհրդանոցն իրբեւ խարխուլ շէնք մը՝ յառաջուան որոշման համեմատ — 1893ին — գետնի հաւասար եղաւ:

Երկու հարիւր տարուան միջոցին մէջ շատ խորհուրդներ, որոշմունքներ ու վճիռներ ելան «պումպին» (գունդ) տակէն: Այսպէս կը կուշուէր խորհրդանոցն, այն գագաթն եղած քարէ մեծ թակոյկին համար, որ տանիքին մէջ տեղը՝ վերեւը կեցած էր: Տարեգրոց նայելով՝ մեր պապերը, շէնքը կանգնուելու ժամանակ, այս քարէ կափարիչով փակուած կուժին մէջ յիշատակարաններ զրած էին: Հիմակ որ շէնքը վար առնուեցաւ, քարէ թակոյկին մէջ թղթի փշրանքներէ զատ բան մը չգտնուեցաւ: Թամանակին խոնաութիւնն ու անձրեւները, այն յիշատակարանաց թղթերը հետզհետէ փտեցուցած փշրած էին: Այնպէս որ ասոնք չէ թէ միայն կարգացուելու բաներ չէին, հապա գիտցողը միայն կրնար ըսել թէ ասոնք ատեն մը գրուած թղթեր էին:

Մեծ հրապարակին անընդմիջապէս կից եւ անոր հետ հաղորդութեան ու իրբեւ թէ շարունակութեան մէջ են վերին ու ստորին Ջրի փողոցները 1. Միջնափողոցին վերի ու վարի մասերը 2. Սողումնեան 5 ու Եօթը խաչերու 6 փողոցները. գարձեալ՝ Երեքտասան քաղաքն Դ ու քաղքին գլխաւոր շրջագայութեանը 9 տանող փողոցիկները: — Հայաքաղքին ուրիշ փողոցներն են, վերի ու վարի Թղթատարութեան փողոցը (ատեն մը Կովբիգեան փողոց) 3, ներ-